ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-3.3.3

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Ծրագիրը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից. (1) Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում, (2) Ներդրումների և արտահանման խթանում, (3) Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում, (4) Ծրագրի կառավարում և մոնիթորինգ և գնահատում:

Ստանդարտացմանն ուղղված ծրագրի մասով «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիրը կաջակցի հետևյալ ոլորտներին՝

ա) Ժամանակակից SS համակարգի ձևավորում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի գործունեության արդյունավետությունը զարգացնելու նպատակով, ներառյալ համապատասխան SS մարտավարության, էլեկտրոնային գրադարանի և տվյալների բազայի ծրագրի մշակում, ինչպես նաև ժամանակակից SS սարքավորումների առաջիկա ձեռքբերում:

բ) Միջազգային և տարածաշրջանային ստանդարտների հայերեն թարգմանություն:

Ստանդարտների թարգմանության վերոնշյալ բաղադրիչի սահուն կատարման նպատակով՝ պահանջվում է մի շարք թարգմանությունների իրականացում՝ ստանդարտների ներդաշնակեցման գործընթացի ժամանակին իրագործման համար:

Անգլերենից հայերեն նյութերի թարգմանության և խմբագրման պահանջները բավարարելու նպատակով, Ստանդարտների ազգային ինստիտուտը փնտրում է բարձր մակարդակի կարողություններով անհատ թարգմանիչ՝ նշված թարգմանություններն արդյունավետ և արագ կերպով կատարելու համար:

Սույն հանձնարարականի նպատակն է ապահովել որակյալ և մասնագիտական թարգմանություն, ինչպես նաև իրականացնել միջազգային (ISO, IEC) և Եվրոպական (EN) ստանդարտների խմբագրում:

Խորհրդատուն կվարձվի 1 տարի ժամկետով:

Ուստի ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս ունեն համապատասխան որակավորում և փորձ վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Որակավորման պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է ունենա՝

- Անգլերեն լեզվի, բանասիրության Բակալավրի աստիճան կամ հավաստագրված մասնագիտական դիպլոմ՝ ձեռք բերված Հայաստանում կամ Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչված այլ երկրում,
- Անգլերենի և հայերենի գերազանց իմացություն,
- Համապատասխան ոլորտի տեխնիկական թարգմանության փորձ,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ թարգմանության ոլորտում,
- Միջազգային և եվրոպական ստանդարտներով նախատեսված հայերեն տերմինաբանության իմացությունը և/կամ դրանց թարգմանության փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- Microsoft Office ծրագրի վերաբերյալ համակարգչային հմտություններ:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄՋԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011 թ. հունվարին հաստատված «Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎՋՄԲ վարկերի և ՄՋԸ վարկերի ու դրամաշնորհների շրջանակում խորհրդատուների ընտրության եւ վարձելու ուղեցույցներ», շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. մայիսի 10-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am